ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ «ԼՐԱԲԵՐԻ» (ԱՄՆ) ԷՋԵՐՈՒՄ

Լ. Վ. ՀՈՎՆԱՆՅԱՆ

Հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը Սովետական Միության վրա առաջացրեց աշխարհի առաջադեմ մարդկության ցասումը։ Խուսանավելով այդ հուժկու շարժման ալիքների վրա և ելնելով իրենց շահերից՝ 1941 թ. հունիսի 22-ին Անգլիայի, իսկ հունիսի 24-ին՝ ԱՄՆ-ի կառավարությունները պատրաստակամություն հայտնեցին աջակցելու Սովետական Միությանը՝ ֆաշիզմի դեմ նրա մղած պատերազմում։ Հուլիսի 12-ին Մոսկվայում Անգլիայի և ՍՍՀՄ-ի միջև ստորագրվեց «Համաձայնություն Գերմանիայի դեմ պատերազմում համատեղ գործողությունների մասին»։ ԱՄՆ-ի կառավարությունը օգոստոսի 2-ին որոշում ընդունեց ՍՍՀՄ-ին «ամեն տեսակ» օգնություն ու աջակցություն ցույց տալու մասին[1]։

Պատերազմում ՍՍՀՄ-ին օգնելու հարցը չերմ արձագանք գտավ առաջադեմ մարդկության, այդ թվում նաև ամերիկահայության ամենալայն շրջաններում։ Նյու-Յորքում, Վաշինգտոնում, Բոստոնում, Ֆրեզնոյում և այլուր տեղի ունեցան բազմամարդ միտինգներ, որոնց մասնակիցները գոհունակություն էին հայտնում պաշտոնական հայտարարություններից և պահանջում էին անհապաղ իրական օգնություն ցույց տալ Սովետական Միությանը։ Սակայն առաջադեմ մարդկության, ինչպես նաև ամերիկահայ դեմոկրատական շրջանների ուրախությունը կարճատև էր, քանի որ ԱՄՆ-ը և Անգլիան ֆաշիզմի ջախջախման համար գործնական միջոցների չէին դիմում, դրանով իսկ ձգտելով հնարավորին չափ շատ թուլացնել ՍՍՀՄ-ը։

ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանները տարատեսակ պատրվակներով սկսեցին ձգձգել հիտլերյան Գերմանիայի դեմ Երկրորդ ճակատի բացումը. դա առաջացրեց առաջադեմ մարդկության, այդ թվում նաև ամերիկահայ առաջադիմական շրջանների անհանգստությունը։ Այդ քաղաքականությունը սկսեց քննադատվել նաև ամերիկահայ առաջադիմական մամուլում, որի ավանգարդն էր Նյու-Յորքում 1938 թ. լույս տեսնող «Լրաբեր» երկօրյա թերթը։ Մերկացնելով ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանների միտումնավոր դանդաղկոտությունը, «Լրաբերը» ընդգծում էր, որ «Արևմտյան ճակատ կազմել հիմա հնարավոր է», որ «ամերիկյան ժողովուրդը դժգոհ է այն բանից, որ մինչև հիմա Արևմտյան ճակատ չստեղծվեցավ»[2]։

Ինչպես իրավացիորեն նկատում էր թերթը, Երկրորդ ճակատի բացումը կնպաստեր եվրոպական երկրներում հակաֆաշիստական շարժման հետագա վերելքին, հիտլերականների թիկունքում նորաստեղծ «Երրորդ ռազմաճակատի» ակտիվացմանը։ Մատնացույց անելով այն «դյուրավառ նյութը», որ կուտակվել էր հիտլերյան Գերմանիայի լծի տակ տառապող եվրոպական երկրը-

---

[1] *Մանրամասն այդ մասին տե՛ս* В. Л. Израэлян, Антигитлеровская коалиция (1941—1945), М., 1964.

[2] *«Լրաբեր», 9. VIII. 1941։*

ներում, «Լրաբերը» «Երկրորդ ճակատը» խորագրով խմբագրականում գրում էր. «Եվրոպական ժողովուրդներու այսօրվա ցնցող խլրտումները դյուրությամբ կվերածվին ընդհանուր ապստամբության, եթե միայն Մեծ Բրիտանիան, տեղի տալով անգլիական ժողովրդի աղաղակող պահանջին, ստեղծի Արևմտյան ճակատը։ Այդ ճակատը ստեղծելու համար ամեն հնարավորություն կա, այդ ճակատը պետք է ստեղծվի, և այդ կլլա նացիզմի շուտափույթ կործանման ազդանշանը»[3]։

Մի քանի օր անց «Լրաբերը» հանդես եկավ «Միացյալ հարվածը պետք չէ ուշանա» հոդվածով, որտեղ ասվում էր. «այս կացությունը կպահանջե, որ Սովետական Միությունը առանձին պետք չէ մնա նացի բռնակալությունը և պատերազմական դժոխային մեքենան ջախջախելու դյուցազնական գործի մեջ»։ Ողջունելով երեք տերությունների (ՍՍՀՄ, ԱՄՆ, Անգլիա) Մոսկվայի համաձայնագիրը՝ հիտլերյան Գերմանիային համատեղ հարված հասցնելու մասին, թերթն ընդգծում էր, որ նման հարվածի հապաղումը հանցագործություն է մարդկության հանդեպ. «Պետք է անել հաջորդ քայլը։ Բրիտանիան պետք է բանա Արևմտյան ճակատը և ԱՄՆ-ը պետք է պատերազմ հայտարարի Գերմանիայի դեմ»[4]։

Ուշագրավ է «Լրաբերի» համարներից մեկը, որն սկսվում է «Մոսկվան վտանգի մեջ է» խմբագրականով։ «Եթե Մոսկվան վտանգվի,— իրավացիորեն ասվում էր այնտեղ,— կվտանգվին Լոնդոնն ու Վաշինգտոնը, Ամստերդամն ու Նյու-Յորքը»։ Ահա թե ինչու դա հուզում է «ոչ միայն մոսկվացիներին, այլ նաև ամբողջ աշխարհի մարդկությանը»[5]։ Այն հարցին, թե «ինչո՞ւ վտանդվեցավ Մոսկվան», թերթը պատասխանում է, որ դրա հիմնական պատճառը ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանների միտումնավոր ու հանցագործ դանդաղկոտությունն է ինչպես Երկրորդ ճակատի բացման, այնպես էլ Սովետական Միությանը էական ռազմա-տնտեսական օգնություն կազմակերպելու գործում։ «Տնտեսական օգնությունը Սովետական Միությանը,— նշում էր թերթը,— կիսամիջոց է միայն հիտլերյան բռնակալությունը տապալելու համար։ Պետք է բանալ Արևմտյան ճակատը... ժամանակն է նաև, որ Անգլիան և ԱՄՆ-ը ստանձնեն Սովետների Արևելյան սահմանների պաշտպանությունը, որպեսզի Սովետական Միությունը իր այդտեղի զորքերը տեղափոխի Արևմուտք։ Ամերիկայի Միացյալ Նահանգները պետք է զինեն իրենց առևտրական նավերը, պետք է արտոնեն, որ իրենց նավերը մտնեն պատերազմական գոտիները և զենք ու ռազմամթերք հասցնեն կռվող ուժերին»[6]։

Անգլո-ամերիկյան կառավարող շրջանների միտումնավոր դանդաղկոտության դեմ ուղղված բողոքը շուտով դուրս եկավ մամուլի էջերից և համակեց առաջադեմ մարդկության ամենալայն զանգվածներին։ ԱՄՆ-ում, Անգլիայում և այլուր ժողովրդական մասսաները սկսեցին հանդես դալ հանուն Երկրորդ ճակատի բացման։ Դա արժանացավ «Լրաբերի» ջերմ հավանությանը. «Բրիտանական ժողովուրդը կպահանջե Չերչիլի կառավարությունից, որ նա բանա Արևմտյան ճակատը»[7],— խանդավառությամբ ազդարարում էր «Լրաբերը» և

3 Նույն տեղում, 7. X. 1941։
4 Նույն տեղում, 16. X. 1941։
5 Նույն տեղում, 18. X. 1941։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։

շեշտում, որ կառավարությունը պետք է ընդառաջի «ժողովրդի աղաղակող պահանջին»[8]։

Ամերիկահայ առաջադիմական կազմակերպությունների և լրագրերի նախաձեռնությամբ մի շարք հայաշատ քաղաքներում տեղի ունեցան միտինգներ՝ ուղղված երկրորդ ճակատի բացման հարցում անգլո-ամերիկյան կառավարող շրջանների ցուցաբերած միտումնավոր դանդաղկոտության դեմ։ Այս տեսակետից նշանակալից են Նյու-Յորքի հայության 1942 թ. օգոստոսի 7-ի և 21-ի միտինգները, որոնք ընթացան «Ուժ տանք երկրորդ ճակատի բացմանը» լոզունգով[9]։

Սակայն երկրորդ ճակատի անհապաղ բացման համար ԱՄՆ-ում սկսված շարժումը մասսայական ու մարտական բնույթ չստացավ։ Դրան խոչընդոտում էին ինչպես երկրում հայտարարված պատերազմական դրությունն ու այդ առիթով ընդունված արտակարգ օրենքները, այնպես էլ պետական ու ռազմական ղեկավար գործիչների դեմագոգիկ հայտարարություններն այն մասին, որ երկրորդ ճակատի բացման համար ձեռնարկվում են անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումներ։

«Լրաբերը», սակայն, շարունակում էր հրատարակել բազմաթիվ հոդվածներ, որոնցում համառորեն պահանջում էր առանց հապաղելու Արևմուտքից հարձակվել Հիտլերյան Գերմանիայի վրա՝ ստիպելով նրան պատերազմելու երկու ճակատում։ Բարձր գնահատական տալով Մոսկվայի տակ 1941 թ. նոյեմբեր-դեկտեմբերին և 1941—1942 թթ. ձմեռը ծավալված գործողությունների ընթացքում սովետական բանակի տարած համաշխարհային-պատմական հաղթանակներին, «Լրաբերը» 1942 թ. վաղ գարնանը գրում էր. «Մեծ և ճիշտ են Սովետական Միության հաջողությունները Արևելյան ճակատում, բայց ոչ ոք չի կտրող ժխտել, որ թշնամին տակավին զորավոր է և ընդունակ է խոշոր վնասներ հասցնելու։ Ահա այս չարիքի առաջն առնելու համար այլևս անհրաժեշտ դարձած է բանալ Արևմտյան ճակատը և ստիպել, որ նացիստները կռվին երկու ճակատում։ Իսկ լրիվ ոչնչացնել Հիտլերը կնշանակե դյուրացնել Ճապոնի պարտությունը խաղաղականի մեջ»[10]։

1942 թ. Մայիսի 1-ին ԱՄՆ-ի աշխատավորները հանդես եկան սովետական ժողովրդին ռազմա-տնտեսական էական օգնություն ցույց տալու և անհապաղ երկրորդ ճակատ բացելու պահանջով։ Մայիսմեկյան կոչերում «Լրաբերը» ընդգծում էր, որ ամբողջ աշխարհի և, առաջին հերթին, դաշնակից տերությունների աշխատավորությունը «բազմապատկված եռանդով պետք է լծվի մարտական աշխատանքի՝ արտադրելու զենքեր Սովետական ճակատի և երկրորդ ճակատի համար»։ Նա վճռականորեն պետք է պահանջի «ճիշտ հիմա Եվրոպայի մեջ բանալ երկրորդ ճակատ մը և այս տարի վերջ տալ հիտլերիզմին ու պատերազմին»[11]։

Օգտվելով Արևմտյան ճակատի բացակայությունից, հիտլերյան հրամանատարությունը, ինչպես հայտնի է, 1942 թ. գարնանը սովետա-գերմանական ռազմաճակատում կենտրոնացրեց մեծ ուժեր, ստեղծեց ռազմական տեխնի-

---

8 Նույն տեղում, 7. X. 1941։

9 Նույն տեղում, 1. VIII. 1942, հմմտ. 15. VIII. 1942։

10 Նույն տեղում, 12. III. 1942։

11 Նույն տեղում, 30. IV. 1942։

կայի ու կենդանի ուժի նշանակալից գերակշռություն և ամռանը ձեռնարկեց «վճռական» հարձակում, նպատակ ունենալով կարճ ժամանակամիջոցում հաղթել Սովետական Միությանը, իսկ այնուհետև ուժերն ուղղել Անգլիայի և ԱՄՆ-ի դեմ։ Սովետական բանակի և սովետական ամբողջ ժողովրդի հերոսական դիմադրության շնորհիվ հիտլերյան հրամանատարության պլանները կրկին ձախողվեցին։ «Լրաբերը», որ ուշի-ուշով հետևում էր մարտական գործողությունների ընթացքին, գրեց. «Սևաստոպոլն ինկավ, բայց ձախողեցուց նացիներու գարնանային արշավանքը։

Ճիշտ հիմա բանանք Երկրորդ ճակատը Եվրոպայի մեջ և ձախողեցնենք նացիներու ամառային ուշացած ընդհանուր հարձակողականը Արևելյան ճակատի վրա և ապահովենք նացիներու շուտափույթ կործանումը։ Այդ կլլտ լավագույն կերպը վճարելու մեր տուրքը Սևաստոպոլի պաշտպաններուն, որոնք իրենց դյուցազնական պայքարներով և հերոսական մահով պաշտպանեցին ոչ միայն Սովետական Միությունը, Կովկասը, Հայաստանը, այլ նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները, Բրիտանիան և ազատատենչ ամբողջ մարդկության դատը»[12]։

Հիմնավորելով Երկրորդ ճակատի շուտափույթ բացման անհրաժեշտությունը, «Լրաբերը» դրում էր. «Ձգձգելով Երկրորդ ճակատի մը ստեղծումը Եվրոպայի մեջ, գուցե առիթ կտրվի Հիտլերին իրագործելու Արևելյան ճակատի վրա և Միջին Արևելքի մեջ ռազմագիտական կարգ մը նպատակներ, որոնք պատճառ կրնան դառնալ պատերազմի երկարաձգման և նույնիսկ շատ վրտանգավոր ձախողություններու դուռ բանալու Միացյալ ազգերու համար։ Հիտլերի նպատակն է, ներկա շրջանին Կարմիր բանակի ուժերը բաժանել Կենտրոնական և Հյուսիսային Ռուսաստանի ուժերեն, հասնել Կովկասի և Միջին Արևելքի նավթադաշտերուն, կապ ստեղծել Ճապոնի հետ... պետք չէ թողնել, որ Հիտլերը այս նպատակներուն որևէ մեկուն հասնի, և այդ ընելու միակ կերպը Երկրորդ ճակատ բանալն է ճիշտ հիմա»։ «Լրաբերը» միաժամանակ նկատում է, որ «Երկրորդ ճակատը չի բացվում, որովհետև Անգլիայի և Ամերիկայի կառավարական ու զինվորական շրջաններու մեջ կան Մյունխենյան անբուժելի և վարակիչ մտայնությամբ վարակված մարդիկ, որոնք արգելք կլլան Երկրորդ ճակատի մը բացման»[13]։

Մի քանի օր հետո «Լրաբերը» հրատարակեց «Վորոնեժի ճակատամարտը» խորագրով հոդված, որում ասվում էր. «Հիտլերը հիմա ամբողջական հարձակում կընե Դոնի ճակատի վրա, որպեսզի վաղը միացյալ ազգերու համար անհնար ըլլա երկու ճակատով կռվիլ իրեն դեմ, որպեսզի վաղը դարձյալ ինքը մեկ ճակատի վրա կռվի միացյալ ազգերու դեմ, և այդ ճակատն ալ ինքը որոշե թե ուր պիտի ըլլա։

Պետք է այսօր բանալ Երկրորդ ճակատը և չձգել, որ Հիտլերը վաղը իրագործե մինչև վերջ մի ճակատի վրա կռվելու ծրագիրը»[14]։

«Լրաբերի» մի այլ համար սկսվում էր «Խնայեք Սովետ պահեստիները» կոչ-հոդվածով, որտեղ շեշտված էր. «Ստալինգրադի և Կովկասի ճակատի վրա Սովետական Միությունը ստիպվեցավ գործածել իր այնքան կենսական պա-

12 Նույն տեղում, 9. VII. 1942։
13 Նույն տեղում, 14. VII. 1942։
14 Նույն տեղում, 18. VII. 1942։

հեստիններրը... Բայց ինչո՞ւ Սովետական Միությունը պիտի ստիպված ըլլա մեր սեփական փրկության, Միացյալ Նահանգների և Անգլիայի փրկության համար... այնքան արժեքավոր պահեստիններր նետել նացիներու կատաղած երկաթապատ երթի առջև, երբ անգլո-ամերիկյան զինյալ ուժերը Բրիտանական կղզիներու և Իսլանդիայի մեջ կբարոյալբվին՝ անգործության մատնված ըլլալով։

Ինչո՞ւ համար Սովետական Միությունը պարտավորված պիտի ըլլա Կարմիր բանակի պահեստիններր գործածել, նացիներու դեմ 14 ամիս անընդհատ պատերազմելե հետո, հինգ միլիոն կորիշ մարտիկներ զոհ տալեն հետո, երբ Եվրոպայի մեջ այդ նույն 14 ամսվա ընթացքին բրիտանական և ամերիկյան ուժերը մեկ հատիկ գնդակ չեն արձակել։ Որոշ մարդիկ, որ կհայտարարեն, թե Ռուսաստանը կկռվի միայն իր համար, նրանք նոր Մյունխենի գետին կպատրաստեն... Օդային պատերազմը չի կրնար փրկել մեզ։ Բանանք Երկրորդ ճակատը ճիշտ հիմա»[15]։

1942 թ. աշնան ծանր օրերին, երբ հիտլերյան զորաբանակները, լայնորեն օգտագործելով զավթված երկրների և Գերմանիայի «դաշնակիցների» ռազմական տեխնիկան ու կենդանի ուժը, օղակել էին Լենինգրադը, հասել մինչև Ստալինգրադ և Կովկասի նախադռները, «Լրաբերի» մեկնաբան Ա. Միրիճանյանը հանդես եկավ «Երկրորդ ճակատը հիտլերիզմի դեմ» ծավալուն հոդվածով, որում մերկացնում էր անգլո-ամերիկյան կառավարող շրջանների նենգամիտ քաղաքականությունը և այդ երկրների ժողովուրդներին պայքարի կոչում հանուն Երկրորդ ճակատի անհապաղ բացման։ «Պատերազմները շահելու համար բավական չեն մարզված բանակ, զենք և ռազմամթերք, անհրաժեշտ է նաև գիտենալ թե պետության ղեկավարները, զինյալ ուժերու հրամանատարները, իշխանության տեր դասակարգը քաղաքական ի՞նչ նպատակներ կհետապնդեն այդ պատերազմին մեջ»,— գրում էր նա և ընդգծում. «Արևի լույսի պայծառությամբ պարզ է, որ Երկրորդ ճակատի արգելքը զինվորական հարցը չէ բնավ։ Այն վաղուց պատրաստ է։ Պակասը Երկրորդ ճակատը բացելու կամեցողությունն է», որն ունի բազմաթիվ պատճառներ[16]։ Դրանցից առավել կարևորներն են, նկատում է հեղինակը, ամերիկյան մի շարք պետական ու ռազմական գործիչների «Մյունխենյան մտայնությունը» և Հիտլերի «հայտնի և գաղտնի հինգերորդ զորասյուները», որոնք «ցանկանում են Միացյալ ազգերը պառակտել»[17]։

1942 թ. սեպտեմբերի սկզբին տեղի ունեցավ Ամերիկահայ առաջադիմական միության V համագումարը, որը պետք է քննարկեր ամերիկահայության անելիքները՝ Երկրորդ ճակատ բացելու գործում[18]։ Համագումարին հղած ուղերձում միության քարտուղար Մ. Տ. Մարտենը, անդրադառնալով անգլիական և ամերիկյան ժողովուրդների համար սովետական բանակի և սովետական ժողովրդի մղած մահու և կենաց պայքարի նշանակությանը, նկատեց, որ «Ստալինգրադի առաջ Դիտրոյթը կպաշտպանվի, Մոսկվայի հաղթանակը Լոնդոնի հաղթանակն է... բայց պատերազմը շուտափույթ շահելու համար մեկ

15 Նույն տեղում, 11. VIII. 1942։
16 Նույն տեղում, 3. IX. 1942։
17 Նույն տեղում, 5. IX. 1942։
18 Նույն տեղում, 12. IX. 1942։

պայման կա. Միացյալ ազգերը պետք է միասնաբար և իրենց ամբողջ ուժերու կենտրոնացումով կռվին հասարակաց թշնամիին՝ Հիտլերի դեմ։ Այս ըսել է անմիջապես բանալ Երկրորդ ճակատը»[19]։

Անգլիայի ու ԱՄՆ-ի կառավարող շրջաններն ընդառաջելով նավթարդյունաբերական մոնոպոլիաների ձգտումներին, 1942 թ. ամեռնամուտին Հյուսիսային Աֆրիկայում ձեռնարկեցին ռազմական հարձակողական գործողություններ իտալո-գերմանական զորքերի դեմ։ Օգտվելով դրանից, անգլո-ամերիկյան պաշտոնական և կիսապաշտոնական մամուլը, որը սերտորեն կապված էր մոնոպոլիստական շրջանների հետ և արտահայտում էր նրանց շահերը, ամեն կերպ ջանում էր բողարկել այդ հարձակման իսկական նպատակները։ Որոշ պաշտոնաթերթեր այդ հարձակումը գնահատեցին որպես Երկրորդ ճակատի բացում։ Այսպես, օրինակ «Նյու-Յորք Թայմս» թերթն այդ օրերին հետին պլան մղելով սովետա-գերմանական ռազմաճակատում սովետական բանակի մղած պատմական հերոսամարտերը, մեծարում էր Հյուսիսային Աֆրիկայում անգլո-ամերիկյան զորքերի ձեռնարկած հարձակողական գործողությունները և հայտարարում, թե իբր «Երկրորդ ճակատը բացված է»[20]։

Ամերիկահայ առաջադիմական մամուլը և, առաջին հերթին, «Լրաբերը» վճռականորեն հանդես եկան պատմական իրադարձությունների այդ նողկալի կեղծման դեմ։ «Եգիպտոսի հարձակողականը Երկրորդ ճակատ չէ» խմբագրական հոդվածում «Լրաբերը» գրում էր. «Ոչ մեկ կերպով թերի չգնահատելով հանդերձ Հյուսիսային Աֆրիկայեն Ռոմելի ուժերը մաքրելու ռազմագիտական նշանակությունը և սրտանց շնորհավորելով Եգիպտոսի մեջ սկսած հարձակողականը, պետք է խոստովանենք, որ միացյալ ազգերու ժողովուրդներու պահանջը Երկրորդ ճակատն է եվրոպական ցամաքի վրա և ոչ թե Հյուսիսային Աֆրիկայի մեջ, որ կրնա միայն օժանդակ ճակատի դեր կատարել։ Եթե այս է Երկրորդ ճակատը, համեմատելով Աֆրիկայի ճակատի նշանակությունը Եվրոպայի ճակատի հետ, կարելի է շատ իրավամբ ըսել, գործածելով ժողովրդական ասացվածքը. «Եվ լեռը ծնավ մուկ մը չընչին»[21]։

«Նացիզմի «անհաղթելիության» առասպելը պայթեցավ սովետական դիմադրությամբ» հոդվածում «Լրաբերի» ռազմա-քաղաքական մեկնաբաններից մեկը շեշտելով Եվրոպայում՝ ֆաշիստական Գերմանիայի արևմուտքից Երկրորդ ճակատ բացելու հրամայական անհրաժեշտությունը, գրում էր. «Այն օրը, երբ դաշնակից ազգերը իրական օգնության ձեռք կերկարեն Կարմիր բանակին և կբանան Երկրորդ ճակատը Հիտլերի դեմ, այդ օրը կլլա սկիզբը ցանկալի վախճանին»[22]։

Ջերմորեն ողջունելով Լենինգրադի հերոսական պաշտպաններին, «Լրաբերը» շարունակում էր շեշտել Հյուսիսային Աֆրիկայում դաշնակիցների գործողությունների երկրորդական նշանակությունը և կտրականապես պահանջում բացել Երկրորդ ճակատ՝ Արևմտյան Եվրոպայում։ «Պատերազմի ելքը պիտի որոշվի եվրոպական ցամաքի վրա, որը դարձած է հիտլերիզմի միջնաբերդը։ Հետևաբար Միացյալ ազգերը պետք չէ սպասեն Հյուսիսային Աֆրիկայի ա-

---

19 Նույն տեղում, 15. IX. 1942։

20 „The New York Times", 1. XI. 1912.

21 «Լրաբեր», 3. XI. 1942։

22 Նույն տեղում, 7. XI. 1942։

ռանցքի (իտալո-գերմանական—Լ. Հ.) ուժերու մաքրելուն, այլ պետք է եվրոպական ցամաքի վրա բանան Երկրորդ ճակատը, լիովին օգտագործելով Կարմիր բանակի ձմեռային հարձակողականի ջախջախիչ հաջողությունները և 1943-ին ոչ թե գտնվեն Բեռլին տանող ճամփու վրա, այլ Բեռլինում»[23]։

Ծավալելով հարձակում Հյուսիսային Աֆրիկայում, դաշնակիցների բանակները հասան զգալի հաջողությունների։ Նրանք 1943 թ. մայիսին այն մաքրեցին ֆաշիստական զորքերից և հունիսին ներխուժեցին Սիցիլիա։ «Սիկիլիայի գործողությունները, սակայն, Երկրորդ ճակատ չէ, այլ առաջին քայլն է, որուն պիտի հաջորդե դաշնակից զորքերու ներխուժումը իտալական մայր ցամաքը հարավեն։ Բայց նույնիսկ դաշնակից զորքերի ներխուժումով Իտալիա իսկական Երկրորդ ճակատը բացված պիտի չլլա,— իրավացիորեն ընդգծում էր «Լրաբերը»,— որովհետև այդ պարագան պիտի չստիպե Հիտլերը կռվելու երկու ճակատի վրա։ Այնինչ Երկրորդ ճակատի բուն նպատակն է Արևելյան ճակատին վրա կենտրոնացված հիտլերական 211 զորաբաժիններու մեկ մասը շեղեցնել։ Այդ մեր հաղթանակներու բանալին է։

Մեր շուտափույթ հաղթանակի համար կարևոր է,— եզրափակում էր թերթը,— որ ճիշտ հիմա, Սիկիլիայի գործողությանց զուգընթաց, դաշնակից զորքերը ներխուժեն Բրիտանական կղզիներեն Եվրոպա և հարվածեն հիտլերական Գերմանիայի սիրտը»[24]։

Կոտրելով թշնամու դիմադրությունը և հասցնելով նրան կործանիչ հարվածներ, սովետական բանակը 1943—1944 թթ. ձմռանը և հետո ամբողջ ճակատով ծավալած հարձակողական մարտերի ընթացքում ոչ միայն ազատագրեց ֆաշիստների կողմից ՍՍՀՄ-ում զավթված երկրամասերը, այլև թափանցեց Կենտրոնական Եվրոպա։ Անգլո-ամերիկյան իմպերիալիստները, որ մինչ այդ ամեն կերպ ձգձգում էին Երկրորդ ճակատի բացումը, սկսեցին շտապել։ Նրանք համոզվեցին, որ սովետական բանակն ի վիճակի է իր ուժերով կարճ ժամանակամիջոցում խորտակել ֆաշիստական Գերմանիան և ազատագրել նրա լծի տակ հեծող եվրոպական ժողովուրդներին։ Վախենալով այդ երկրներում հեղափոխական ուժերի հաղթանակից և ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաստատումից, անգլո-ամերիկյան կառավարող շրջանները 1944 թ. հունիսի 6-ին, երբ արդեն ակնբախ էր հիտլերյան Գերմանիայի վերջնական ջախջախումը, բացեցին Երկրորդ ճակատը, նպատակ ունենալով կանխել սովետական բանակի մուտքը արևմտաեվրոպական երկրներ, օկուպացնել դրանք, ճնշել հեղափոխական պայքարը, աջակցել հետադեմ ուժերին։

Չնայած անգլո-ամերիկյան կառավարող շրջանների հետադեմ նպատակներին, Երկրորդ ճակատի բացումը որոշ չափով չլատեց հիտլերյան Գերմանիայի ուժերը և արագացրեց նրա վերջնական ջախջախումը։ Առաջադեմ մարդկությունը ջերմորեն ողջունեց Երկրորդ ճակատի բացումը։ Անմաս չմնաց նաև ամերիկահայ առաջադիմական մամուլը։ «Լրաբերը» տարիներ անց խոսելով Երկրորդ ճակատի բացման նշանակության մասին գրեց. «Երբ նացի բանակը իր ամբողջ ուժը նետած էր Սովետական Միության դեմ և միլիոնավոր զոհեր կխլեր, Արևմուտքի մեջ Երկրորդ ճակատ մը բանալու պահանջը բարձրացավ ամեն կողմե։ Բայց Չերչիլի գլխավորությամբ սովետատյացները մերժեցին,

23 Նույն տեղում, 21. I. 1943։

24 Նույն տեղում, 1. VI. 1943։

որպեսզի «ռուսներն ու գերմանացիք զիրար ջարդեն», և Երկրորդ ճակատը բացվեցավ միայն այն ատեն, երբ արդեն հայտնի էր, որ նացիները չեն կրնալ շահիլ, և Կարմիր բանակը զանոնք արդեն փախուստի կմատներ»[25]։

Այսպիսով, ամերիկահայ առաջադիմական մամուլի ավանգարդային օրդան «Լրարերը» երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հետևողական պայքար էր ծավալել հանուն Արևմտյան Եվրոպայում Երկրորդ ճակատի բացման, մերկացնում էր անգլո-ամերիկյան կառավարող շրջանների դիրքորոշումը Երկրորդ ճակատի բացման հարցում և վճռականապես պահանջում նրա անհապաղ բացումը։ Երկրորդ ճակատի բացումից հետո թերթը տալիս էր այդ ճակատում ծավալված մարտական գործողությունների ճիշտ գնահատականը։

ВОПРОС ОТКРЫТИЯ ВТОРОГО ФРОНТА НА СТРАНИЦАХ «ЛРАБЕРА» (США)

Л. В. ОВНАНЯН

Резюме

В Нью-Йорке с 1938 г. выходит в свет армянская газета «Лрабер» («Вестник»). В годы второй мировой войны она уделяла большое внимание вопросу открытия Второго фронта. Будучи авангардом прогрессивной армянской периодической печати, издаваемой в США, газета «Лрабер» последовательно освещала всемирное значение борьбы советского народа против фашизма, разоблачала реакционную позицию правящих кругов США и Англии, настоятельно требовала немедленного открытия Второго фронта в Западной Европе.

25 Նույն տեղում, 12. VIII. 1950։